371.5
A-11

MAR 2010

Գրքեր տարբեր բոլոր չերկրների միացեալ

371.5
Ռ-11

1-509а

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

320/61

Թարգմ. ՇԱՎԱՐԴ

Г.П.Б. в Лигр.
Ц. 1934 г.
Акт. № 246

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1934

28 FEB 2014

49.285

3570
У

Ответственный редактор Г. А. Потеин
Технический редактор О. Тер-Давыдов
Сдано в набор 2/XII 1933 г.
Подписано в печать 11/XII 1933 г.
Статформат А6—105х148,
Уполкрайлит Б—602, Заказ № 6424
Об'ем 1¼ печ. лист. Тираж 1500
Тип. им. "Станки 1902 г.", СККПО
в Ростов н-Дону

211-87

Գրադարան
Ֆ-509 2

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի վճռաձևը)

ՌԽՖՍՀ Ժողկոմխորհը վորոշում է.

Վորպես փոփոխում միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրություն, հաստատված ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի կողմից 1923 թվի դեկտեմբերի 18-ին (որենքների ժողովածու, 1924 թիվ, № 2, հոդ. 15), հաստատել խորհրդային պոլիտեխնիկ դպրոցի հարակից կանոնադրությունը։

ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի նախագահ՝
Դ. ՍՈՒԼԻՄՈՎ

ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի յեվ տնտեսական խորհրդի գործերի կառավարչի տեղակալ՝
Դ. ՄՈՒՐԱՇՈՎ

19 սեպտեմբերի, 1933 թ. Մոսկվա, Կրեմլ

Инв. № 17474

Т-253

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում, այսինքն՝ այնպիսի պայմանների նախապատրաստման շրջանում, որոնք հնարավոր են դարձնում կոմունիզմի լրիվ իրականացումը, դպրոցը պետք է լինի ոչ միայն կոմունիզմի սկզբունքներն ընդհանրապես անցկացնող, այլ և պրոլետարիատի գաղափարական, կազմակերպչական, դաստիարակչական ազդեցությունն աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և ոչ պրոլետարական շերտերի վրա անցկացնող, նպատակ ունենալով դաստիարակել մի սերունդ, որն ընդունակ է վերջնականապես հաստատել կոմունիզմը» (ՀԿԿ (բ) ծրագիրը)։

Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցը կառուցում է իր աշխատանքն այն հիման վրա, որ միացնում է ուսումն ու դաստիարակումն արտադրական և հասարակական աշխատանքների հետ պատրաստելով ամբողջովին զրաղեալ մարդիկ, որոնք լավ տիրապետում են գիտության հիմքերը։ Խորհրդային դպրոցը թե տեսականում և թե գործնականում ծանոթացնում է սովորողներին արտադրության բոլոր գլխավոր ճյուղերի հետ։

Այդ նպատակով յուրաքանչյուր դպրոցում կազմակերպվում են դպրոցական արհեստանոցներ, բանվորական սենյակներ և գյուղատնտեսական ուսումնական հողամաս և հատուկ պայմանների հիման վրա դպրոցներն ամրացվում են արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկություններին, որտեղ կազմակերպվում է սովորողների հասարակական-արտադրական աշխատանքները, որն յենթարկվում է դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին։

2. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցը հանդիսանում է միասնական, այսինքն բոլոր

աստիճաններում դնում է սովորողների կոմունիստական դաստիարակության միասնական խնդիրները և ապահովում է սովորողների անմիջական փոխադրումն առաջին աստիճանից յերկրորդը և այլն։

3. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցը բաժանվում է յերեք աստիճանի.

ա) 1-ին աստիճանը (տարրական դպրոց) 8-ից մինչև 12 տարեկան յերեխաների համար ներառյալ, սովորողների հասակի 4 խմբերով։

բ) 2-րդ աստիճանը (միջին դպրոցը) 12-ից մինչև 15 տարեկան յերեխաների համար ներառյալ, սովորողների հասակի 3 խմբերով։

գ) 3-րդ աստիճանը (միջին դպրոց) 15-ից մինչև 18 տարեկանների համար ներառյալ նրանց հասակի 3 խմբերով, ըստ վորում ուսուցման 10-րդ տարին համարվում է լրացուցիչ։

Գործարանների, խորհտնտեսությունների և ՄՏ կայանների շրջաններում առաջին աստիճանի դպրոցներում կարող են կազմվել գերությական խմբեր՝ յոթ տարեկան յերեխաների համար։

4. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում 2 սեռի յերեխաները սովորում են միասին։

5. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցը հանդիսանում է պետական դպրոց։

6. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում ուսուցումը ձրի յե։

7. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցի բոլոր սովորողներն ոգտվում են ամբուլատորային ձրի բժշկությամբ և ձրի տրամադրում են դեղեր։

8. Դպրոցը կոմյերիտական և պիոներական կազմակերպությունների հետ միասին յերեխաների և պատանիների մեջ կազմակերպում է արտադպրոցական աշխատանք։

9. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցը սիստեմատիկ պրոպագանդ է տանում բնակչության մեջով և առաջին հերթին սովորողների ծնողների մեջ ահող սերնդի կոմունիստական դաստիարակության վերաբերող և ակտիվ մասնակցում է հին կենցաղի մնացորդների դեմ տարվող պայքարին։

10. Դպրոցն իր ամբողջ ուսումնական և դաստիարակչական աշխատանքն անց է կացնում ՌԿԱԾՄՀ-ի Լուսժոկոմի սահմանած ծրա-

դրերով և ուսումնական պլաններով ու կայուն դասացուցակով. վորը կազմվում է յուրաքանչյուր դպրոցում վոչ պակաս, քան մի յեռամսակի համար։

11. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցն ոգնում է սովորողներին իրենց ինքնասովորությունը կազմակերպելու գործում և ամեն տեսակ աջակցություն ու ոգնություն է ցույց տալիս կոմյերիտմիությանը և «Պատանի պիոներներ» ու «Հոկտեմբերիկներ» մանկական կազմակերպություններին յերեխաների միջև նրանց աշխատանքը ծավալելու գործում։

12. Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում ամբողջ մանկավարժական աշխատանքը կատարվում է սովորողների մայրենի լեզվով։

13. Արգելվում է և քրեական կարգով հետապնդվում է վորևե մի դավանության դասավանդությունը խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում, նաև կրոնական ծիսակատարությունները և կրոնական ներգործման այլ ձևերն աճող սերնդի վրա։

Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցն ապահովում է սովորողների հակակրոնական դաստիարակությունը և իր ուսումնական ու կրթական աշխատանքը կատարում է այն հիմունքով, վոր ակտիվ պայքարի կրոնի և վերջինիս՝ սովորողների ու հասակավոր բնակչության վրա թողած ազդեցության դեմ։

14. Իր աշխատանքի ու կյանքի ամբողջ կատարվածքով խորհրդային պոլիտեխնիկ դպրոցն իրեն նպատակ է դնում մշակել և ամրապնդել սովորողների գիտակից կարգապահությունը։

Դպրոցի վարիչը և մանկավարժները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները սովորողների միջև ամրապնդելու կարգապահություն և վճռական պայքար տանելու սովորողների արարքների դեմ, վորոնք խանգարում են դպրոցի կարգը, անհրաժեշտ դեպքերում կիրառելով կարգապահական պատիժներ, մինչև անգամ ժամանակավոր հեռացնելով դպրոցից։

Դպրոցում կարգապահությունն ամրապնդելու պայքարում պետք է ներգրավվեն սովորողների ծնողները, կոմյերիտական, պիոներական և հասարակական այլ կազմակերպությունները։

2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

15. Տարրական դպրոցները բացվում են ռայգործկոմների, քաղխորհրդների և ռայխորհրդների վորոշումներով, իսկ միջին դպրոցները և որինակելի դպրոցները — ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ժողկոմխորհների ու յերկրային (մարզային) գործկոմների վորոշումներով։

Ծանոթություն. Մոսկվայում և Լենինգրադում միջին դպրոցները բացվում են քաղխորհրդների վորոշումներով։

16 Դպրոց են ընդունվում հետևյալ հասակի յերեխաները.

առաջին խումբը	8 — 9	տարեկանները
յերկրորդ »	9 — 10	»
յերրորդ »	10 — 11	»
չորրորդ »	11 — 12	»
հինգերորդ »	11 — 13	»
վեցերորդ »	12 — 14	»
յոթերորդ »	13 — 15	»
ութերորդ »	14 — 16	»
իններորդ »	15 — 17	»
տասներորդ »	16 — 18	»

17. Յերեխաներին դպրոց ընդունում է դպրոցի վարիչը։ Դպրոց ընդունվողից պահանջվում է ծնողների, խնամակալների կամ իրենց սովորողների գրավոր կամ բանավոր հայտարարությունը, ցույց տալով ընդունվողի ծննդյան ժամանակը և նախնական ուսուցման վերաբերյալ տեղեկությունները։

18. Առաջին խմբի ընդունելությունները կատարվում են առանց վրեմ ստուգման։ Բոլոր մնացած խմբերն ընդունվողները յենթարկվում են ստուգման ՌԻՆՏՍԿ-ի Լուսժողկոմի ցուցումների հիման վրա։

19. Այն տեղերում, վորտեղ դեռ չի մտցված յոթնամյա պարտադիր ուսուցում, սովորողներն յերկրորդ աստիճանի 5 րդ խումբն ընդունելիս վոչ մի առավելություն չի տրվում ավյալ դպրոցի 4-րդ խումբն ավարտողներին։ Նրանք մյուս դպրոցների սովորողների հետ 5-րդ խումբն են ընդունվում ընդհանուր հիմունքներով։

20. Սովորողների խմբից խումբ փոխադրելը, նույնպես և դպրոցի ավարտման մասին վկայական տալը կատարում է դպրոցի վարիչն ուսումնական տարվա վերջը սով-

բողոքների աշխատանքի և հաշվետվության հիման վրա և ստուգումների վերջնական արդյունքները պարզելուց հետո, ինչպես ստուգումները պարտադիր կերպով կատարվում են յուրաքանչյուր դպրոցում ուսումնական տարվա վերջը։

21. Այն սովորողները, որոնց համար դպրոցի ծրագիրն ուժերից վեր է, պետք է յենթարկվեն բժշկական մանկավարժական հատուկ քննարկման և բժշկի դուցումներով ընդունվեն հատուկ ուժանդակ խմբերը, դպրոցները կամ բժշկական ուսումնական հիմնարկները։

3. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա, ԴՊՐՈՑԻ ՎԱՐԻՉԸ

22. Դպրոցը գլխավորում է նրա վարիչը։

23. Տարրական և միջին դպրոցների վարիչներին նշանակում է համապատասխան լուսաժիրը մանկավարժական և հատարակական սառաժ ունեցող մարդկանցից, տարրական դպրոցի համար վոչ պակաս, քան միջին մանկավարժական կրթություն ունեցող վարիչ, իսկ միջին դպրոցի համար բարձր մանկավարժական կրթություն ունեցող։

24. Դպրոցի վարիչը ղեկավարում է դպրոցի ուսումնական-դաստիարակչական և վարչական-տնտեսական ամբողջ կյանքը և անհատապես պատասխանատու է դպրոցի ամբողջ աշխատանքի համար։

Վարիչի կարգադրությունները, որոնք վերաբերում են դպրոցի թե ուսումնական և թե տնտեսական կյանքին, պարտադիր են դպրոցի բոլոր աշխատողների համար։

25. Դպրոցը հանձինս իր վարչի ներկայանում է պետական, արհմիութենական և հասարակական այլ կազմակերպությունների ու բնակչության առաջ։

26. Վարիչի բացակայության ժամանակ նրա բոլոր պարտականությունները կատարում է իր ուսումնական մասի ոգնականը կամ վարչի կողմից լիազորված և ռայոնական (քաղաքային) լուսաբաժնի հետ համաձայնեցրած հատուկ անձնավորությունը։

27. Դպրոցի վարիչը —

ա) հաստատում է դպրոցի տարեկան արտադրական պլանը և բոլոր աշխատանքային պլաններն ու ծրագրերը և անհրաժեշտ հրահանգություն է անում նրանց կատարման վրա։

բ) պատասխանատու է ուսումնական տարվա անհրաժեշտ նախապատրաստման, պարապմունքները ժամանակին սկսելու և դպրոցը սովորողներով լրացնելու համար բոլոր պլանի, պատասխանատու է նաև աշխատողների ընտրության և նպատակահարմար օգտագործման համար։

գ) Ստուգում է մանկավարժների աշխատանքը — այցելելով անձամբ նրանց դասերը դասարաններում, կաբինետներում և ձեռնարկություններում և պարբերաբար նայելով սովորողների աշխատանքները։

դ) կազմակերպում է դպրոցական խորհրդի աշխատանքը և բանվորական ու կոլտնտեսային հասարակայնությանը ներգրավում է դպրոցի աշխատանքներում։

ե) կազմակերպում է սովորողների ծնողների հետ աշխատանքը և անում է մանկավարժական պրոպագանդ բնակչության մեջ։

զ) ապահովում է ամբողջ ծրագրային նյութի անհրաժեշտ վարակը և նրա ժամանակին յուրաքանչյուր խմբում և ամբողջ դպրոցում և պատասխանատու է այդ պահանջի կատարման համար, նաև դպրոցն ավարտողների կողմից Լուսժողկոմատի ծրագրերով սահմանված դիտելիքների ամբողջ ծավալի լրիվ և հաջող յուրացման համար.

ը) պատասխանատու է դասախարակչական աշխատանքի և աշակերտական կազմակերպությունների աշխատանքի հաջողության համար, նաև կարգապահության դրության համար սովորողների և դասատուների միջև.

թ) պայքարում է սովորողների մաղձկալության դեմ և նպաստավոր պայմաններ է ստեղծում կարիքավոր յերեխաների ուսուցման համար և ցույց է տալիս նյութական ոգնություն դպրոցի կողմից.

ժ) միջոցներ և ձեռք առնում, վոր դպրոցն խիստ մատակցի սոցիալիստական շինարարությանը, սովորողների հասարակական-արտադրական աշխատանքը յենթ-

թարկելով դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին և պատասխանատու է դասատվության բարձր վորակի ու կոմունիստական դաստիարակության համար դպրոցում.

ի) ապահովում է մանկավարժների վորակավորման բարձրացումը և կազմակերպում է ուսուցչության պոլիտեխնիկ պատրաստությունը.

լ) սարքավորում է դպրոցն ուսումնական և դասարանական պիտույքներով, ձեռնարկներով և գործիքներով և պատասխանատու է դպրոցական շենքերի առողջապահական դրության, նորոգումը ժամանակին անելու և դպրոցը պատշաճորեն մատակարարելու համար, նաև ամբողջ դպրոցական գույքի լրիվության, և պահպանության համար.

խ) կազմում է տարեկան նախահաշիվ և յելքի ու մուտքի հաշվետվություն, ատում է դպրոցի աշխատանքի վիճակագրական հաշվառում և պատասխանատու է դրամական ու նյութական մատյանների, մուտքի, յելքի փաստաթղթերի և ամբողջ ֆինանսական — նյութական հաշվառման համար.

ծ) պատասխանատու է հանրակացարանի ու ճաշարանի պատշաճ դրության համար և կազմակերպում է սովորողներին հագուստ, վոտնաման ու տաք նախաճաշ մատակարարելու գործը.

կ) ապահովում է մանկավարժների աշխատանքի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու գործը։

28. Դպրոցի վարչին վերապահվում է.

ա) սահմանված կարգով աշխատանքի ընդունել և արձակել դպրոցն սպասարկող տեխնիկական աշխատողներին.

բ) գործել դպրոցի անունից, փոխարեն նրա ներկայացուցիչը.

գ) հաստատել դպրոցական խորհրդի փոխոշումները և նրանց անհրաժեշտ լինելու դեպքում դադարեցնել այդ փոխոշումների կիրառումը, հայտնելով այդ մասին իր գիտություն ռայոնական (քաղաքային) Լուսբաժնին, վորի փոխոշումները տվյալ հարցի վերաբերյալ հանդիսանում են վերջնական.

դ) գույություն ունեցող աշխատանքի վրա սահմանել դպրոցի նեղային կարգապահության կանոններ և տուլժի յենթարկել

211-87

աշխատանքային կարգապահությունը խախտող դպրոցական աշխատողներին, իսկ անուղղելի սովորողներին, որոնք խուլիգանություն են անում, վիրավորում են դասատուներին, չեն կատարում դպրոցի վարչության ու մանկավարժների կարգադրությունները, խախտում են դպրոցական ռեժիմը, փչացնում ու հափշտակում են դպրոցի գույքը — այդպիսիներին հեռացնել դպրոցից, զրկելով դպրոց մտնելու իրավունքից մեկից մինչև յերեք տարի ժամանակով.

ե) արձակել սովորողների հանձնաժողովներն ու խմբակները, որոնք չեն համապատասխանում դպրոցի ուսումնական դաստիարակչական նպատակներին.

զ) միջին դպրոցում սահմանված կարգով անմիջապես մնորինել դպրոցի բոլոր վարկերը, 3-րդ աստիճանի վարկերի տնորենի իրավունքներով։

29. Դպրոցի վարիչն անմիջական կապ և պահպանում քաղաքային (ռայոնական) Լուսբաժնի հետ, առաջնորդվում է նրա ցուցումներով և կիրառում ե կյանքում նրա բոլոր կարգադրությունները, որոնք վերաբերում են սովյալ դպրոցին, նաև դպրոցի աշխատանքի մասին հաշվետվություններ ե ներկայացնում Լուսբաժնին, վերջինիս պահանջի համաձայն։

Ծանոթություն։ Այն դեպքում, յերբ դպրոցի վարիչը համաձայն չե քաղաքային (ռայոնական) Լուսբաժնի ցուցումներին ու կարգադրություններին, չդադարեցնելով այդ կարգադրությունների գործադրումը, կարող ե միջնորդել յերկրային (մարզային) Լուսբաժնի առաջնորդությունը (կարգադրությունները) վերացնելու մասին։

30. Դպրոցի վարիչը համաձայնեցնում ե դպրոցը ղեկավարելու իր աշխատանքը Լուսաշխի տեղկոմի հետ և պարբերաբար հաշվետվություն ե անում նրա առաջ, տրամադրելով նրան դպրոցի արտադրական աշխատանքի ուսումնասիրության համար բոլոր անհրաժեշտ նյութերը։

31. Դպրոցի վարիչը պիոներ կազմակերպության աջակցությամբ ներգրավում ե ընդհանուր աշակերտական կազմակերպությունները և սովորողների ամբողջ մասային դպրոցի ուսումնական-արտադրական և հասարակական-քաղաքական աշխատանքնե-

րում, կազմակերպելով սովորողներին պայքարելու ուսման վորակի, դպրոցի պոլիտեխնացման, կիսակից կարգապահության համար, խնամքով վերաբերվելու դպրոցական գույքին և պայքարելու դպրոցի առողջապահական դրության համար։

Բ. ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉԻ ՈԳՆԱԿԱՆՆԵՐԸ

33. Առաջին աստիճանի դպրոցում ոչխումբ լինելու և յերկրորդ աստիճանում վեցխումբ լինելու դեպքում, դպրոցի վարիչն ունենում է ուսումնական մասի ոգնական, վորին նշանակում է Լուսաբաժինը, վորի տնորինության տակ է գտնվում դպրոցը։

33. Դպրոցի վարչի ուսումնական մասի ոգնականը պետք է մանկավարժ լինի և տարրական դպրոցի համար ունենա վոչ պակաս քան մանկատեխնիկումի կրթություն և վոչ պակաս՝ քան յերկամյա փորձառություն, իսկ միջին դպրոցի համար պետք է ունենա մանկավարժական բարձրագույն կրթություն և վոչ պակաս, քան յեռամյա մանկավարժական փորձառություն։

34. Դպրոցի վարչի ուսումնական մասի ոգնականը պատասխանատու է վարչի առաջ ուսումնական, ծրագրային-մեթոդական և դասավարակչական աշխատանքի դրության համար, նաև դպրոցի մանկավարժների վորակը բարձրացնելու վերաբերյալ աշխատանքի համար։

35. Վարչի ուսումնական մասի ոգնականը.

ա) կազմում է ուսումնական աշխատանքի պլանը և կազմակերպում է ծրագրային մեթոդական աշխատանքը.

բ) կազմակերպում է և ուղղություն է տալիս դասատուների աշխատանքին, նրանց առանձին առարկաների բանվորական պլանները կազմելիս.

գ) կազմում է պարապմունքների կայուն ցուցակ, ներքին կարգապահության կանոններ կաբինետներում, աշխատանոցներում, որհեատանոցներում և այլն.

դ) կազմակերպում է սովորողների արտադրական ուսուցումը ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, դպրոցական հողամասում և այլն.

է) կազմակերպում է ուսուցչության պրոֆեսիոնալ վերապատրաստումը.

զ) կատարում է դպրոցի ուսումնական աշխատանքի հաշվառումը, թե քանակական և թե որակական, առանձին առարկաներում և ամբողջ դպրոցում.

ը) կազմակերպում է սովորողների արտադպրոցական աշխատանքը, իրագործում է կապը դպրոցի կոմերիտական, պիոներական և աշակերտական կազմակերպությունների հետ.

թ) կազմակերպում է կաբինետների, աշխատանոցների, գրադարանների, արհեստանոցների, բանվորական սենյակների և մյուսների սարքավորումը.

ժ) կազմակերպում է սովորողների բաշխում ըստ խմբերի և նրանց փոխադրումը հաջորդ խմբերը, ներկայացնելով իր առաջարկները դպրոցական խորհրդին և դպրոցի վարչին.

ի) հրահանգում է մանկավարժներին դասի կազմակերպման հարցերի վերաբերյալ, կիրառելով առանձին մեթոդներ աշխատանքներում, հրահանգում է նաև դաստիարակչական աշխատանք տանելու գործում և դպրոցի մնացած բոլոր ուսումնական դաստիարակչական աշխատանքներում.

36. Առաջին աստիճանի ամենախոշոր դպրոցներում ռայխորհրդների և ռայգործկոմների վորոշումով նշանակվում են դպրոցի վարչի տնտեսական մասի ոգնական, իսկ յերկրորդ աստիճանի ամենախոշոր դպրոցներում վարչի տնտեսական մասի ոգնականը նշանակվում է ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ժողկոմխորհի, յերկրային (մարզային) գործկոմների կողմից։

Վարչի տնտեսական մասի ոգնականը

ա) պատասխանատու է դպրոցի վարչի առաջ դպրոցական տնտեսության որինակելի տնտեսության, դպրոցական շենքերի, բակի, կահավորանքի և պիտույքների, դպրոցական շենքերի առողջապահական դրության և դպրոցական ամբողջ գույքի լրիվության և պահպանության համար.

բ) կազմակերպում է դպրոցական արհեստանոցների մատակարարումն ու սարքավորումը դպրոցի վարչի հաստատած պլաններով և անց է կացնում ձեռնարկների,

ուսումնական պիտույքների, դպրոցական կահավորանքի և մյուսների գնումը.

գ) կազմակերպում է յերեխաների փոռնամանների, հագուստի, տաք նախաճաշի մատակարարումն ոժկոմի ամենատերտ մասնակցությամբ.

դ) անց է կացնում դպրոցական գույքի ցուցակագրումը, հետևում է նրա պահպանմանը և կատարում է անհրաժեշտ նորոգում.

ե) վարում է տեխնիկական աշխատողների ուժերի դասավորումը, բաշխում է աշխատանքը նրանց միջև, յուրաքանչյուր աշխատողի ամրացնում է վորոշ աշխատանքի և վորոշում է տեխնիկական աշխատողների որվա անելիքը։

Գ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՅԵՎ ԽՄԲԱՎԱՐՆԵՐԸ

37. Խմբերում ամենորյա սիստեմատիկ աշխատանք տանելու համար վարչի ուսումնական մասի ոգնականը նշանակում է խմբավարներ 5, 6, 7, 8, 9, և 10 խմբերում. իսկ այն դեպքում, յերբ առաջին աստիճանի 4-րդ և 3-րդ խմբերում սահմանված է առարկայական կամ ցիկլային դասավորություն, նշանակում է խմբավարներ նաև այդ խմբերում։ Խմբավարները ջոկվում են տվյալ խմբի մանկավարժների կազմից։

38. Խմբավարը յեվ ուսուցիչը պարտավոր են՝

ա) Իմանալ իրենց խմբի յուրաքանչյուր սովորողին նրա ուսման հառաջդիմության, նյութական, կենցաղային պայմանների, հասարակական ակտիվության և այլ տեսակետից.

բ) ծանոթացնել իրենց խմբի սովորողներին դպրոցի ներքին կարգապահության կանոնները և կատարել նրանք.

գ) հրավիրել խմբի ժողովները քննարկելու համար ուսումնա-դաստիարակչական, աշխատանքային կարգապահության, սոցիալիստական մրցման և այլ հարցերը.

դ) դպրոցական ինքնավարության և յերեխաների ու պատանիների հասարակական կազմակերպությունների (պիոներվաշտի, ՀԼԿՅԵՄ բջիջի) հետ համերաշխ տանել սիստեմատիկ աշխատանք ուսումնա-դաստիարակչական աշխատանքի վորակի բարձրաց-

ման վերաբերյալ և սիստեմատիկորեն նեբարկել սովորողներին կոմունիստական վարմունքի ունակություններ.

ե) ոժանդակել սովորողների կուլտուրական առողջապահական ունակություններ ձեռք բերելուն, շաղկապելով այդ աշխատանքը դպրոցական բժշկի աշխատանքին և ներդրավելով նրանում մանկավարժներին ու սովորողների ծնողներին.

զ) ոգնել դպրոցական ինքնավարության մարմիններին, պիոներ վաշտերին և կոմսերիամիության բջիջներին, կազմակերպել և ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը խմբերի և առանձին սովորողների միջև.

ը) մանկավարժական միջոցառումների անցկացումով պայքարել սովորողների մաղվելու և յերկրորդ տարին մնալու դեմ։

Խմբավարը բացի այդ պարտական է՝

ա) հրավիրել իր խմբի սովորողների ծնողների ժողով, վոչ պակաս, քան ուսումնական տարվա յեռամսակում մի անգամ.

բ) հրավիրել դպրոցի վարչի սահմանած պլանի համաձայն տվյալ խմբի դասատուների խորհրդակցության, մշակելու համար աշխատանքի ընդհանուր պլան խմբում և միջոցներ ձեռք առնելու ուսման վորակի լավացման և դիտակից կարգապահության ամրացման համար խմբում.

գ) պարբերաբար զեկուցել դպրոցի վարչին խմբի աշխատանքի դրության մասին.

39. Տարրական և միջին դպրոցի ուսուցիչներին նշանակում և արձակում է Լուսաժնի վարիչը՝ դպրոցի վարչի ներկայացումով։ Ուսուցիչները լիովին պատասխանատու յեն ուսումնական պլանների և դպրոցի ծրագրերի կատարման համար, սովորողների կրթության և յուրաքանչյուր սովորողների հառաջդիմության ու դաստիարության համար իրենց դասավանդած առարկաներից։

40. Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է՝

ա) շարունակ բարձրացնել իր մանկավարժական վորակը.

բ) սիստեմատիկորեն հետևել յուրաքանչյուր սովորողի աշխատանքին, իր ժամանակին նկատելով հետ մնալը կամ չհաճախելը, հայտնաբերելով պատճառները և շտապ միջոցներ ձեռք առնելով նրանց վերացման համար.

գ) ամեն կերպ ամրացնել գիտակից կարգապահությունը խմբում.

դ) ունենալ կոնկրետ, մանրամասն մշակած ուսումնական և դաստիարակչական աշխատանքի բանվորական պլաններ.

ե) իր ժամանակին տեղեկացնել դպրոցի վարչին ուսումնական աշխատանքի թերությունների մասին և այդ թերությունների վերացումն ապահովող կոնկրետ առաջարկություններ մտցնել.

զ) պլանային կարգով տանել մանկավարժական պրոպագանդ ընակչության և սովորողների ծնողների միջև.

ը) հոգալ կաբինետների, աշխատանքային սենյակների, դասավանդվող առարկայի, դասարանների սարքավորման և այնտեղ գտնվող ձեռնարկների ու գործիքների լրիվության և պահպանման մասին.

թ) ակտիվ մասնակցել սովորողների արտադպրոցական կյանքի կազմակերպմանը։

Դ. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

41. Այն դպրոցներում, վորտեղ 300 սովորողներից ավելի յեն, յերեխաների արտադպրոցական կյանքը կազմակերպելու համար նշանակվում է մանկավարժ, վորը տանում է արտադպրոցական աշխատանք, վորի պարտականությունն է կազմակերպել սովորողների խմբակներ, ինքնագործունեության յերեկույթներ, նաև կազմակերպել սովորողների հանդիսաը, մասնավորապես դասամիջոցներին, թատրոններ, կինոներ հաճախելու, անցկացնել արտադպրոցական եքսկուրսիաներ, սարքել և ապասարկել մանկահրապարակներ դպրոցներին կից և մանկավարժական պրոպագանդ տանել սովորողների ծնողների միջև։

Ե. ՄԱՆԿԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

42. Մանկական ինքնավարությունը խորհրդային պոլիտեխնիկ դպրոցում պարտադիր է։ Ընդգրկելով բոլոր յերեխաներին, նա ոգնում է դպրոցին դաստիարակելու նախաձեռնող և բազմակողմանի զարգացած սոցիալիզմի կառուցողներ։

Մանկական ինքնավարությունն աշխատում է հատուկ կանոնադրության հիման վրա,

վորը հաստատված է ՌԽՖՍՀ Լուսժողկոմի կողմից՝ մանկական կոմունիստական կազմակերպությունների Կենտրոնական բյուրոյի հետ միասին։

2. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

43. Աշխատավորությունն ամենալայն կերպով ներգրավելը դպրոցի ամբողջ աշխատանքին ակտիվորեն մասնակցելու համար իրագործվում է հետևյալ ձևով — դպրոցական խորհուրդներ, սովորողների ծնողների պարբերական ժողովներ և բանվորների, կոլտնտեսականների ու ծառայողների բրիգադներ, որոնք կամավոր կերպով ոգնում են դպրոցին։

Նպատակ ունենալով ամրացնել կապը ընակչության հետ, դպրոցը սահմանում է մշտական հաշվետվություն աշխատավոր մասսաների առաջ։

44. Դպրոցական խորհուրդը հանդիսանալով խորհրդակցական մարմին, իրականացնում է պրոլետարական հսկողությունը դպրոցի աշխատանքի վրա։ Դպրոցական խորհրդի կազմն են մտնում՝

ա) մի մի ներկայացուցիչ տեղական խորհրդից կամ գործադիր կոմիտեից, Լուսաշխատությունից, տեղական կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններից, ֆաբ-գործարկոմից, կոլտնտեսության վարչությունից և պատանի պիոներների վաշտից.

բ) այն ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների բանվորների ու կոլտնտեսականների հատուկ ժողովներում ընտրված պատգամավորները (մեկից մինչև յերեք մարդ), որոնց ամրացված է դպրոցը.

գ) սովորողների ինքնավարության համար դպրոցական մարմնի ներկայացուցիչը.

դ) սովորողների ծնողների ներկայացուցիչները մեկից մինչև յերեք մարդ։

Դպրոցական խորհրդի նախագահ հանդիսանում է դպրոցի վարիչը։

45. Դպրոցական խորհուրդը՝

ա) քննարկում է դպրոցական կյանքի բոլոր հիմնական հարցերը և դպրոցական աշխատանքի վարակը բարձրացնող միջոցա-

ուսմեերի նախագծերը, որոնք վերաբերում են դպրոցի վերակառուցմանը պոլիտեխնիկ հիմունքներով և սովորողների հանրակրթական գիտելիքների բարձրացմանը.

բ) որոշում է միջոցառումներ դպրոցը ներդրավելու համար յերկրի, ռայոնի, ձեռներկության կոլտնտեսության հասարակական-քաղաքական կյանքի յեվ ռայոնի կուլտուրական շինարարության մեջ.

գ) քննարկում է կենտրոնական և տեղական խորհրդային մարմինների ցուցումներն ու կարգադրությունները ժողովրդական կրթության հարցերի վերաբերյալ և որոշում է միջոցառումներ իրագործելու դպրոցի կյանքում այդ ցուցումներն ու կարգադրությունները.

դ) ներդրավում է բանվորների և կոլտնտեսականների լայն մասսաներին դպրոցի պոլիտեխնացման գործում.

ե) քննարկում է դպրոցի սանիտարական ու առողջապահական դրության կարեվորագույն հարցերը, ներդրավում է հասարակական կազմակերպություններին և սովորողների մասսաներին դպրոցի նյութական դրությունը լավացնելու գործին և միջոցներ է ձեռք առնում նյութական ոգնություն ցույց տալու համար առանձին սովորողներին.

զ) ստուգում է պայմանագրի կատարումը դպրոցի և ձեռնարկության միջև, աջակցում է սովորողների արտադրական աշխատանքի կազմակերպմանը թե արհեստանոցում և դպրոցի աշխատանքային սենյակում և թե ձեռնարկություններում.

ը) քննարկում է դպրոցի ծրագրները, արտադրական պլանները և աշխատանքի մեթոդները։

թ) լսում է դպրոցի վարչի, նրա ոգնականի, խմբավարների ու մանկավարժների հաշվետու զեկուցումները նրանց հանձնած աշխատանքի դրության մասին։

46. Դպրոցական խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր նախաձեռնությամբ խորհրդի քննարկմանը դնել ամեն տեսակ հարց, որ վերաբերում է դպրոցական խորհրդին։

47. Դպրոցական խորհուրդը հրավիրվում է տարեկան չորս անգամ (ուսումնական տարվա նախորյակին, ձմեռային ու գարնա-

նային արձակուրդներին և ուսումնական տարվա վերջին)։

48. Տվյալ դպրոցում սովորող յերեխաների ծնողների ժողովները (համադպրոցական և խմբային) հրավիրում է դպրոցի վարիչը՝ վոչ պակաս, քան յերկու անգամ ուսումնական տարվա ընթացքում։

Ժողովի հրավիրվում են միայն ընտրական իրավունքով ողտվող ծնողները։

49. Դպրոցական խորհրդում կարող է կազմվել ոժանդակ կոմիտե, վորի նպատակն է աջակցել դպրոցի վարչին նրա բոլոր աշխատանքներում, հատկապես դպրոցի ուսումնա-նյութական հենակետն ապահովելու ասպարեզում և նյութական ոգնություն ցույց տալու գործում առանձին կարիքավոր սովորողներին։

Ոժկոմի կազմն են մտնում ընտրական իրավունքով ողտվող սովորողների ծնողների ներկայացուցիչները։ Ոժկոմն ընտրում է նախագահ և քարտուղար։

Կոմիտեյի ձեռք բերած միջոցները ծախսում է դպրոցի վարիչը ծնողների ժողովի հաստատած նախահաշվի համաձայն։

Ոժանդակ կոմիտեներն աշխատում են հատուկ կանոնադրությունների հիման վրա, վորոնք հրատարակում են լուսավորության կոմիսարիատները։

Ոժկոմը պարբերաբար հաշիվ է տալիս իր աշխատանքի մասին ծնողական ժողովի առաջ։

4. ԴՊՐՈՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

50. Դպրոցի վարիչը պարտավոր է համապատասխան Լուսաժնի և Ֆինանսական մարմիններին, նաև ժողովրդական տնտեսության հաշվառման մարմիններին ներկայացնել հետևյալ հաշվետվությունները.

ա) տեղեկություն սովորողների ընդունելության մասին՝ մինչև սեպտեմբերի 10-ը.

բ) տեղեկություն դարձանային ստուդիաների արդյունքի մասին—հունիսի 10-ը.

գ) դպրոցի ուսումնական և տնտեսական աշխատանքի տարեկան հաշվետվությունը ուսումնական շրջանի ավարտումից հետո—մինչև հուլիսի 10-ը.

դ) տարեկան ֆինանսական հաշվետվություն տեղական բյուջեյի վերաբերյալ՝ մինչև հունիսի 10ը.

ե) տեղեկություն սովորողների հառաջադիմության հաշվառման մասին — ըստ ուսումնական տարվա յեռամսյակների։

51. Խորհրդային բոլոր մարմինները, արհմիությունները և հասարակական այլ կազմակերպություններն իրենց անհրաժեշտ տեղեկությունների համար դիմում են ժողովրդական կրթության մարմիններին և իրավունք չունեն ինքնուրույն կերպով պահանջել դպրոցից լրացուցիչ տեղեկություններ ու հաշվետվություններ ներկայացնելու։

Դպրոցների վիճակագրական տեղեկությունների ու հաշվետվությունների ձևերը վորոշում է Լուսժողկոմատը՝ համաձայնեցնելով ՌԽՖՍՀ ժողտնտեսության հաշվառման վարչության հետ։

52. Ուսումնական տարին վերջանալուց հետո հրավիրվում է քաղաքացիների ընդհանուր ժողով, լսելու համար զեկուցում դպրոցի աշխատանքի դրության մասին։ Զեկուցման հետո ըստ հնարավորին կազմակերպվում են յուցահանդեսներ և յուցադրվում են սովորողների աշխատանքները, միաժամանակ կազմակերպվում է դպրոցի կանոնավոր հաճախում տեղական բնակչության և հասարակական կազմակերպությունների կողմից։

5. ԴՊՐՈՑԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏԱԼՈՒ, ՆՐԱ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ ՏՆՈՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

53. Դպրոցի ամբողջ գույքը, այն է՝ շենքերը և ժամանակ շինարարությունները, սարքավորումը, պիտույքները, ուսումնական ձեռնարկները, գրադարանը, արհեստանոցները, աշխատանքային սենյակները և մյուս գույքը, վորով ոգտվում է դպրոցը, հանդիսանում են պետական սեփականություն։

54. Յուրաքանչյուր դպրոց ունի իր կայուն նախահաշիվը։

55. Յուրաքանչյուր դպրոց ունի Լուսժողկոմատի կողմից սահմանված ձևի պետական կնիք։

ՌԽՖՍՀ Լուսավորության ժողովրդական Կոմիսար՝ Ա. ԲՈՒԲՆՈՎ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցի կանոնադրության հաստատման մասին (ՌԽՖՍՀ. Ժողկոմխորհի 19—11—33 վորոշումը) 3
Խորհրդային պոլիտեխնիկ դպրոցի կանոնադրությունը
1. Ընդհանուր կանոններ 4
2. Սովորողները 10
3. Դպրոցի կառավարումն ու ղեկավարությունը 12
4. Դպրոցի հաշվետվությունը պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին և բնակչության 35
5. Դպրոցին դրամական միջոցներ տալու և նրա գույքի մասին տնօրենի կարգը 37

30.67

ԳԻՆԸ 25 կոպ.
Цена 25 коп.

Арм.
1-5092

На армянском языке

УСТАВ СОВЕТСКОЙ ПОЛИТЕХНИЧЕСКОЙ ШКОЛЫ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԴՐԱԿԱՆԱՏԱՐԱՆԸ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)

34

«Ազգային գրադարան»
NL0231425

H 49.265